Կամ գնում էին Խուստուփ սարը և նրա քարայրի միջից ջուր բերում՝ ցանում արտերի վրա։ Նույնն էին անում Արծվանիկում, գնալով Վարդավառին Խրդրանց խաշը[30] և այնտեղից ջուր էին բերում։ Խաշը մի շorէfդրոնի եկեղեցի է, կազմված է երկու, իրար հետ կապված, շենքերից։ Մի դռնից մտնում էին, շորրորդով դուրս գալիս, ամեն մի եկեղեցում շամէր՝ մոմեր վառելով։ Առաջին եկեղեցին մտնում էին շոքեշոք, շամ վառելուց հետո ոտքի կանգնում, անցնում էին մյուս եկեղեցին. այնտեղ էլ շամ վառելուց հետո դուրս էին գալիս, ետ-ետ քաշվելով։ Զorէfդոնիի մոտ կա մի աղբյուր, որը տեղացիների ասելով երաշտի ժամանակ չի պակասում և անձրևների ժամանակ էլ չի ավելանում։ Դա սուրբ աղբյուր է։ Ավանդությունն ասում է, որ մի վարդապետ, տեսնելով, որ վանքի մոտ ջուր չկա, կրծքով հենվել է իր գավազանին, գավազանի ծայրը գետնի մեջ է խրվել ու այդ ծակով ջուր է ցայտել գավազանի հաստությամբ, որը տարին տասներկու ամիս մնում է նույնը։ Այդ ջուրը մարդուն պահում էր ամեն հիվանդությունից, իսկ արտերը պահպանում էր մկներից, մորեխից կամ կարմիր ժանգից։

Գալիս է բերքը հավաքելու ժամանակը։ Քաղի ժամանակ վուշի ցողուններն արմատով դուրս էին քաշում հողից և մի երկու շաբաթ արևի տակ թողնում չորանալու։ Այս աշխատանքն ավելի կանանց վրա էր ընկնում։ Բերքը ոչ թե տեղափոխում էին գյուղը՝ խույս տալով ճանապարհին սերմերը թափվելուց, այլ հենց դաշտում կանայք փռում էին փալասներն և նրանց վրա թակում էին ցողունները։

Ցորենն ու գարին, ինչպես և խոտը, հնձում էին բացառապես մանգաղով։ Գերանդին համեմատաբար նորամուտ էր։ Ծերունիներից շատերն այժմ էլ չեն կարողանում գերանդին հնձի ժամանակ գործածել և գերադասում են մանգաղը, այն էլ նրա երկար, բարակ և ատամնավոր, թեթև տեսակը, որը կոչվում է չին[31]։

Հնձի ժամանակ հասկերի սուր-սուր ասեղներից պաշտպանվելու համար մի թևքին և վարտիքի ազդրերին կաշու կտորներ են վրա կարում, իսկ կուրծքը պաշտպանում են կաշվե գոգնոցով՝ ըռչակապավ[32]։ Մատները վնասումներից ազատ պահելու համար նրանց վրա հագցնում են տանձենու փայտից մատնոցներ՝ մրնաճուցը, այն է—ճկութին՝ ծրկնաճուցը, անանունին՝ միջնաճուցը, միջին մատին՝ յէռնաճուցը, ցուցամատին՝ կրճպօնը, որը շինվում էր մեծ մասամբ պարկից՝ կաշուց։

Հենց արմատից հնձող բանվորը վարձատրվում էր ավելի, որովհետև հարկադրված էր լինում ավելի կռանալու։ Մյուս կողմից դրանով խնայվում էր և ծղոտը[33]։

Հնձին այժմ կոլխոզներում կանայք մասնակցում են տղամարդկանց հետ հավասարապես։ Մինչև հեղափոխությունն էլ կանացի ուժը գործադրվել է այս

---

30 Խրդրանց գյուղ։

31 Կեռ գործիքները՝ մանգաղը, չինը, ցակատը հավանական է առաջ են եկել ուղիղ բերան ունեցող դանակից, որը փոխվել է նաև դաշույնի և սրի։

32 Երբեմն բավականանում են միայն ըռչակապավ, որը ծածկում է և ծնկները։ Նա հաճախ միացվում է և կաշվե թևերի հետ։

33 Դեռ բոլորովին չհասած ցորենի հասկերից՝ ճեղից անցորդին թույլ էր տրվում քաղել և աղանձ անել՝ բռվել, իսկ հասած հասկերը կրակի վրա բռվել կամ որևէ ձևով այրել արգելվում էր, անշուշտ այդ գործողությամբ բերքի բարաֆաթը կտրելու երկյուղից։